# ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**A**RMENISCHER
**K**ULTUR**V**EREIN
IN **H**ESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt


*Վարչութիւն/Der Vorstand*

Շրջաբերական թիվ 3 / 2013

Ֆրանկֆուրտ, 2013թ. մայիսի 04

**Սիրելի միութենականներ և հայրենակիցներ,**

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2013թ. մայիսի 12-ին՝
կիրակի՝ ժամը 12:00-ին



<u>ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ</u>

Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Այգիկ քահանա Հովհաննիսյանը Նյուրնբերգից՝ տալով օրվա պատգամը:
Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում ժամը **14:00-ից** միասնաբար կնշվի

<u>ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՐՆԱՆ ՏՈՆԸ</u>

Հայ շաբաթօրյա դպրոցի աշակերտները, միության անդամները եւ նորաստեղծ երգչախումբը՝ Իրինա Հովհաննիսյանի ղեկավարությամբ, կշնորհավորեն բոլոր մայրերին իրենց տոնական ելույթով:
Հասցեն՝ Alt-Hausen 3-5, Frankfurt/M.-Hausen:

2013թ. մայիսի 18-ին՝
շաբաթ, ժամը՝ 17:00-ին



<u>ԲԱՑ ԴԱՄ՝</u>

նվիրված **1992 թ. մայիսի 8-ին Շուշիի ազատագրմանը**:
Ներկայացնում են շաբաթօրյա դպրոցի սաները՝ Արթուր Ղազարյանի գլխավորությամբ:
Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2013թ. մայիսի 20-ին՝
երկուշաբթի, ժամը՝ 12:00-16:30



<u>ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ</u>

Այս տարի ևս մեր միությունը կմասնակցի իր հայկական տաղավարով և ազգային պարերով՝ Հոգեգալուստի միջազգային տոնին: Խնդրում ենք ակտիվորեն մասնակցել և աջակցել մեր տաղավարին՝ Ձեր պատրաստած հայկական ուտեստներով:
Հասցեն՝ Frankfurt, Dominikanerkloster:


| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Vorsitzende: | Lusine Vardumyan | Schriftführer: | Armin Preuß | Bankverbindung: |
| | | Schatzmeisterin: | Evet Dujak | Frankfurter Sparkasse |
| 2. Vorsitzender: | Mher Beglaryan | | Tel.: 0163- 60 44 166 | Konto-Nr. 169 417 |
| | Tel.: 0160- 99 53 55 52 | Beisitzer: | Vahe Katschaturian | BLZ 500 502 01 |

Vorstand auch per Mail erreichbar: info@armenier-frankfurt.de www.armenia.de

2013թ. մայիսի 30-ին՝
հինգշաբթի, ժամը՝ 12:00



**ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրմանը** (1918թ. մայիսի 28).

Խնդրվում է յուրաքանչյուրին բերել իր հետ ուտելիք և խմիչք: Հանդիպման վայրը՝ CVJM(Christlicher Verein Junger Menschen), DARMSTADT-ARHEILGEN (Frankfurter Landstraße/ Jakob Jungstr.):

2013թ. հունիսի 15-ին՝
շաբաթ, ժամը՝ 17:00-ին



**ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ» ՇՈՒՐՋ**

«Հայ ժողովրդի մեծագույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը». Կներկայացնի Անահիտ Մուրադյանը :
Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2013թ. հունիսի 29-ին՝
շաբաթ, ժամը 17:00-ին



**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ**

Սիրելի հայրենակիցներ, այդ օրը Ձեզ հետ միասին կպատրաստենք համեղ և հետաքրքիր հայկական ուտեստներ: Ուրախ կլինենք Ձեր ակտիվ մասնակցության համար: Ցանկության դեպքում խնդրվում է դիմել վարչությանը:
Հասցեն՝ միության հանդիպման վայր. Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2013թ. օգոստոսի 24-ին՝
շաբաթ, ժամը՝ 12:00-ին




**ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ «ԼՈԽՄՅՈՒԼԵԻ ԶՎԱՐՃԱՎԱՅՐ»**

Դպրոցական նոր ուսումնական տարվա սկզբին հայ շաբաթօրյա դպրոցը այլ ցանկացողների հետ միասին կմեկնի Լոխմյուլե՝ զվարճալի օր անցկացնելու: Միության աշակերտների ծախսերի մի մասը կհոգա միությունը: Շաբաթօրյա համաքոլյթը, ինչպես նաեւ դպրոցը, այդ օրը փակ կլինեն:
Հասցեն՝ Lochmühle 1, 61273 Wehrheim:

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետևեք մեր ինտերնետային կայքին՝ www.armenia.de)

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

*Վարչութիւն/Der Vorstand*

Միության հայկական շաբաթօրյա դպրոցի **լեզվի** և **պարի** դասընթացները շարունակվում են միության հավաքատեղում, ամեն շաբաթ օր՝ ժամը 15:00-19:00: Լրացուցիչ առաջարկվում են նաև ամիսը երկու անգամ հայ **կերպարվեստի** և **շախմատի,** ինչպես նաև **երգ-երաժշտության** դասընթացներ (ամիսը մեկ անգամ):
Ամեն շաբաթ շարունակվում են նաև նորաստեղծ հայկական **երգչախմբի** պարապմունքները՝ Իրինա Հովհաննիսյանի ղեկավարությամբ:
Հասցեն՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

<u>Կարևոր տեղեկություն կանոնադրության փոփոխության վերաբերյալ</u>

Սիրելի միութենականներ,

շնորհակալություն կանոնադրության փոփոխության վերաբերյալ Ձեր առաջարկների համար:
Ներկայումս կանոնադրության հանձնախումբը զբաղվում է այդ առաջարկների քննարկմամբ: